ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Մատենագիր» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Գ. Գևորգյանի (լիազորագիր, տրված՝ 11.07.2019թ.)

Մ. Լալայանին (լիազորագիր, տրված՝ 11.07.2019թ.)

ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչներ՝

Ա. Եղիազարյանի (լիազորագիր, տրված՝ 24.07.2019թ.)

Կ. Ամիրյանի (լիազորագիր, տրված՝ 24.07 .2019թ.)

քննելով ՀՀ դատական դեպարտամենտի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում

«Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից 04.07.2019թ. ներկայացված (09.07.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/49 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Մատենագիր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մատենագիր» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 04.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված 27.06.2019 թվականի «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝ Մաս Ի-ի, «Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը» 3-րդ կետի պահանջների համաձայն Ընկերությունը խնդրել է պազաբանում, այն մասին, թե ինչու է արխիվացման ծառայությունների մատուցման համար սահմանվել խիստ կարճ ժամկետ՝ 20 օրացուցային օր:

Սահմանված կարգով Ընկերությունը ստացել է պարզաբանում, որ դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվել է՝ ելնելով գնման անհրաժեշտությունից:

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռք բերման նպատակով հայտարարված 27.06.2019 թվականի «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցմամբ սահմանված 20 օրացույցային օր ժամկետը հանդիսանում է խիստ կարճ ժամկետ նմանատիպ ծառայությունների մատուցման համար, ինչը կարող է դիտվել որպես հակամրցակցային համաձայնության փորձ, քանի որ հրավերի Մաս Ի-ի 8.7 ենթակետով նախատեսված է, որ կողմերի համաձայնությամբ պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ, ինչն ենթադրում է, որ հաղթող մասնակցի խնդրանքով կարող է կատարվել ծառայության մատուցման ժամկետի փոփոխություն կամ մերժվել ժամկետի երկարացումը կախված նրանից, թե ով է մրցույթի հաղթողը:

Հնարավո՞ր է արդյոք 20-օրյա ժամկետում իրականացնել ՀՀ դատական դեպարտամենտի արխիվացման աշխատանքները:

Նախատեսված է փորձագիտական արժեքավորման ենթարկել 112.000 հազար գործ: Մեկ մարդը մեկ գործը փորձագիտական արժեքավորման ենթարկելու համար պետք է արխիվապահոցի դարակաշարից գործերը տեղափոխի սեղանի վրա, բացի գործը, ընթերցի որոշման համապատասխան հատվածը կողմնորոշվելու համար գործը ենթակա է քանդման, թե ոչ: Եթե գործը ենթակա է քանդման, նա պետք է առանձնացնի վճիռները կամ որոշումները: Առանձնացված փաստաթղթերը դասավորի թղթապանակի մեջ, կապոցավորի քանդված գործերը: Այս գործողություններն իրականացնելու համար յուրաքանչյուր գործի վրա կծախսվի մոտավորապես 6 րոպե: Հետևաբար մեկ մարդը կարող է 8-ժամյա աշխատանքային օրվա ընթացքում արժեքավորել ընդամենը 80 գործ, այն դեպքում, եթե նրան արժեքավորվող բոլոր փաստաթղթերը ներկայացվեն անմիջապես, առանց որևէ բյուրոկրատական քաշքշուկի: Նույն գործերի քանակն է նշված նաև Ռոսարխիվի կողմից հաստատված «Պետական արխիվների կողմից իրականացվող աշխատանքների և ծառայությունների ժամանակի նորմերը» փաստաթղթի 3.2.1.2.2 կետում: Եթե բաժանենք 112.000 գործը 80-ի կստանանք 1.400 աշխատանքային օր մեկ աշխատակցի համար: Պայմանագրում նշված 20-օրյա ժամկետը, որն իրենից ներկայացնում է առավելագույնս 15 աշխատանքային օր, ենթադրում է, որ 10 տարբեր հասցեներում գտնվող հիմնարկներում, որոնք ներկայացրել է Դատական դեպարտամենտը, պետք է միաժամանակ աշխատեն 9-10 մարդ, իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր արխիվապահոց պետք է կահավորված լինի իննից-տաս սեղան-

աթոռներով: Հաշվի առնելով արխիվապահոցների ազատ տարածքների բացակայությունը հնարավոր չէ միաժամանակ այդքան մարդ գտնվեն մեկ վայրում:

Ի վերջո ՀՀ-ում չկա կազմակերպություն, որը կարող է միաժամանակ տրամադրել 60-70 մասնագետ արխիվացման աշխատանքներն իրականացնելու համար:

- Վճիռներով և որոշումներով ձևավորված մշտական պահպանության գործերի առանձնացում (այս գործերի պահպանության ժամկետները ըստ վերոնշյալ ցանկի 5 տարի է, ուստի գործից հանվում են միայն վճիռները և կամ որոշումները),

- Ամբողջական գործերով մշտական պահպանության գործերի առանձնացում,

- Ժամանակավոր պահպանության գործերի առանձնացում (հատուկ վարույթի դատական գործեր, որոնց պահպանության ժամկետը ըստ վերոնշյալ ցանկի 25 տարի է),

- Առանձնացված մշտական և ժամանակավոր պահպանության գործերի թերթերի համարակալում, գործերի կարում, վավերացում, շապիկների նկարագրում և ցուցակագրում ըստ խմբատեսակների,

- Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի ոչնչացման նպատակով համապատասխան ակտի կազմում,

- Մշտական և ժամանակավոր պահպանության գործերի ցուցակների քննարկում Հայաստանի ազգային արխիվի մեթոդական փորձագիտական հանձնաժողովի նիստում,

- Մինչև 2000թ. ներառյալ մշտական պահպանության գործերի հանձնում «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ:

Ակնհայտ է նաև, որ սա նույնպես բավական աշխատատար գործընթաց է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ընկերությունը բողոքով խնդրել է վերանայել «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված 20 օրացուցային օր ժամկետը՝ սահմանելով 90 /իննսուն/ աշխատանքային օր:

Ի լրումն բողոքի՝ 29.07.2019թ. ներկայացված գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով արխիվացման աշխատանքների համար 20 օրացույցային օր ժամկետ սահմանելը խախտում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 4-րդ մասի, 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Հնարավոր չէ գնումը կազմակերպել մրցակցային, սահմանափակելով մասնակիցների շրջանակը, անհիմն կերպով բարդացնել գնման գործընթացին մասնակցությունը, որովհետև ցանկացած մասնակից համադրելով աշխատանքի ծավալը սահմանված 20 օրացույցային օրերի հետ և ցանկանա մասնակցել բավականին խտրական հիմունքներով կազմակերպվող մրցույթին:

Պայմանագրի նախագծի հավելված 1-ում «Մշտական և ժամանակավոր պահպանության գործերի ցուցակների քննարկում Հայաստանի ազգային արխիվի մեթոդական փորձագիտական հանձնաժողովի նիստում» և «մինչև 2000թ. ներառյալ մշտական պահպանության գործերի հանձնում Հայաստանի ազգային արխիվ ՊՈԱԿ» առանձին բնութագրերը խմբավորվել են մեկ չափաբաժնում:

Խախտվում են նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16^3 հոդվածի առաջին և երկրորդ մասերի պահանջները՝

1. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք սահմանափակում, կանխում կամ արգելում են տնտեսական մրցակցությունը, արգելվում են:

2. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ տնտեսական մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողություն կամ վարքագիծ է համարվում՝

1) տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի նկատմամբ խտրական պայմանների սահմանումը և (կամ) կիրառումը.

2) ձեռնարկատիրական գործունեության արգելումը կամ սահմանափակումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

3) տնտեսվարող սուբյեկտներին հրահանգներ, հանձնարարություններ, ցուցումներ, խորհուրդներ կամ հրամաններ տալը՝ կապված նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ (ապրանքների, կնքվող գործարքների կամ այլ հարցերի վերաբերյալ), բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

4) սպառողների համար պարտականություն նախատեսելը, որով սահմանափակվում է ապրանքների ազատ ընտրության նրանց իրավունքը.

5) այլ պետական մարմինների կամ տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հետ հակամրցակցային համաձայնությունները, այդ թվում՝ գործարքները, համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

«Մատենագիր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 31.07.2019թ. թիվ ԴԴ-3-Ե6859 գրությամբ հայտնել է հետևյալը.

Դատական դեպարտամենտի կարիքների համար «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցմամբ սահմանված 20 օրացուցային օր ժամկետը սահմանվել է ելնելով ՀՀ

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգավորումներից, ինչպես նաև գնման և ծառայությունների մատուցման հրատապ անհրաժեշտությունից, մասնավորապես՝ Դատական դեպարտամենտը 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում /մինչև տվյալ բյուջետային տարվա ավարտը/ պատրաստվում է իրականացնել մոտ 1 միլիոն դատական գործերի արխիվացում:

«Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի մաս կազմող հաշվարկ-հիմնավորման կապակցությամբ հարկ է նշել, որ Ռոսարխիվի կողմից հաստատված «Պետական արխիվների կողմից իրականացվող աշխատանքների և ծառայությունների ժամանակի նորմերը» փաստաթղթի 3.2.1.2.2 կետի համաձայն՝ 8-ժամյա աշխատանքային օրվա համար մեկ մարդու կողմից փորձագիտական արժեքավորման համար սահմանված քանակությունը /այն է՝ 80 դատական գործեր, այսինքն՝ 8-ժամյա աշխատանքային օրվա համար մեկ մարդու կողմից մեկ դատական գործի փորձագիտական արժեքավորման համար սահմանված է 6 րոպե/ խիստ փոփոխական է, ինչի մասին վկայում է վերոնշյալ փաստաթղթի մեկ այլ դրույթ, որում նշված է, որ այդ գործընթացը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ արխիվացման աշխատանքներն իրականացնող մասնագետների փորձից և հմտության մակարդակից, իրականացվող աշխատանքի բարդությունից և նորմերի քանակական ցուցանիշների վրա ազդող այլ գործոններից, նորմերի քանակական ցուցանիշները կարող են առաջարկվող ստանդարտներից ավելի բարձր կամ ավելի ցածր լինել:

Դրանից բացի, գնանշման հարցմամբ սահմանված 20-օրյա ժամկետի կապակցությամբ հարկ է նշել, որ Ուկրաինայի ռեզիդենտ «Ագրեկոլ» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումը պատրաստ է իրականացնել թվով 30 աշխատակիցների միջոցով, իսկ Հայաստանի ազգային արխիվ ՊՈԱԿ-ը՝ թվով 50 աշխատակիցների միջոցով, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է, այն, որ Ռոսարխիվի կողմից հաստատված «Պետական արխիվների կողմից իրականացվող աշխատանքների և ծառայությունների ժամանակի նորմերը» փաստաթղթի 3.2.1.2.2 կետի համաձայն՝ 8-ժամյա աշխատանքային օրվա համար մեկ մարդու կողմից փորձագիտական արժեքավորման համար սահմանված քանակությունը, այն է՝ 80 դատական գործեր, խիստ փոփոխական մեծություն է:

Ինչ վերաբերում է «Մատենագիր» ՍՊԸ-ի այն հարցադրմանը, թե ՀՀ-ում չկա կազմակերպություն, որը միաժամանակ կարող է տրամադրել 60-70 մասնագետ, ապա հարկ է նշել, որ կան, իսկ չլինելու դեպքում էլ հնարավոր և գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցները կաշկանդված չեն և կարող են հանդես գալ նաև համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), ինչը հաճախ է հանդիպում իրականացվող գնման ընթացակարգերի ժամանակ:

«Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիմնավորման մեջ անդրադարձ է կատարվել նաև թվով 9-ը տարբեր հասցեներում գտնվող հիմնարկների արխիվապահոցների ազատ տարածքների բացակայությանը և, որ հնարավոր չէ յուրաքանչյուր արխիվապահոց կահավորված լինել 9-10 աթոռ-սեղաններով: Նշվածի կապակցությամբ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտն ունի բոլոր անհրաժեշտ և բավարար տեխնիկական միջոցներն ու տարածքային պայմաններն արխիվացման աշխատանքները պատշաճ կերպով կազմակերպելու համար:

Եթե վերլուծենք «Մատենագիր» ՍՊԸ-ի բողոքի այն մասը, որտեղ հրավերի ՄԱՍ 1-ի 8.7 ենթակետը ներկայացված է որպես հակամրցակցային համաձայնության փորձ, ապա հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ տվյալ դրույթը պարտադիր ներառման ենթակա է կազմակերպվող գնման գործընթացների հրավերների անբաժանելի մաս կազմող պայմանագրերի նախագծերում և հետևաբար՝ հետագայում կնքվելիք պայմանագրերում:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Մատենագիր» ՍՊԸ-ի մտահոգությունն այդ մասով ևս անհիմն է և այն հակամրցակցային համաձայնության փորձի հետ որևէ աղերս ունենալ չի կարող, հետևաբար՝ Պատվիրատուն գտնում է, որ ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից Դատական դեպարտամենտի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ ծառայությունները մատուցվում են պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից 04.07.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ դատական դեպարտամենտի 31.07.2019թ. թիվ ԴԴ-3-Ե6859 գրությունը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ «Մատենագիր» ՍՊԸ-ի բողոքն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ **<u>ծառայության մատուցման ժամկետը</u>**, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, **<u>պետք է սահմանվեն</u>** ապրանքների և ծառայությունների դեպքում **<u>առնվազն 20</u>**, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և

պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

Դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ ծառայությունները մատուցվում են պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից **20 օրացուցային օրվա ընթացքում**:

Հրավերի պայմանագրի նախագծի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ ծառայությունների մատուցման համար նախատեսված ժամկետը և այն համադրելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջների հետ, գտնում եմ, որ նշված պայմանը բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, մասնավորապես պահպանվել է ծառայությունների մատուցման ժամկետի՝ Կարգով սահմանված նվազագույն պահանջը, չի հակասում գնումների գործընթացի կազմակերպման սկզբունքներին և բխում է Պատվիրատուի այն կարիքից, որի համար կատարվում է տվյալ գնումը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Մատենագիր» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից 04.07.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**